

Հաշմանդամություն ունեցող երեխաների իրական թիվը



Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից 2012 թ. իրականացված «Խոսքը ներառման մասին է» ուսումնասիրության՝ Հայաստանում կան 8000 պաշտոնապես գրանցված հաշմանդամություն ունեցող երեխաներ, որոնք կազմում են մանկական բնակչության 1%-ը: Հաշվի առնելով, որ մանկական հաշմանդամության միջազգային ակնկալելի ցուցանիշը մոտ 2,5% է, փորձագետները նշում են, որ հնարավոր է կան շուրջ 12.000 հաշմանդամություն ունեցող երեխաներ, որոնց հաշմանդամությունը վկայագրված չէ տարբեր պատճառներով:

Աղքատության ռիսկային խումբ



Մեկ կամ ավելի հաշմանդամություն ունեցող երեխայով տնային տնտեսություններում ծայրահեղ աղքատության ռիսկն ավելի բարձր է: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վերջին տվյալներով՝ չնայած երեխաների ընդամենը 1,7 տոկոսն ունի հաշմանդամություն կամ բնակվում է հաշմանդամություն ունեցող այլ երեխաների հետ միասին, նրանց 43,9%-ն աղքատ է, իսկ 6,7%-ը՝ ծայրահեղ աղքատ: Հաշմանդամություն ունեցող 5 երեխաներից 4-ը կամ 81%-ը որևէ սոցիալական ծառայություն, բացի հաշմանդամության թոշակից, չեն ստանում:

Կրթություն բոլորի համար



Այսօր Հայաստանի 1329 պետական միջնակարգ դպրոցներից ներառական կրթություն են իրականացնում 139 հանրակրթական դպրոցներ, որտեղ սովորում են շուրջ 2700 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ: Կրթության և գիտության նախարարությունը նպատակ է դրել է, որ մինչև 2022 թ. ՀՀ-ում գործող բոլոր հանրակրթական դպրոցները պետք է իրենց դռները բացեն հաշմանդամություն ունեցող երեխաների առջև:

Սոցիալական մեկուսացում



Հաշմանդամություն ունեցող երեխաների 12%-ը ընդհանրապես ընկերներ չունեն, և նրանց 33%-ը չի մասնակցում իրենց համայնքում կազմակերպվող միջոցառումներին: Հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր 6 երեխայից մեկը կամ 16%-ն ապրում կամ սովորում է մանկատանը կամ հատուկ տիպի գիշերօթիկ դպրոցում:

Վերև և քաղաքականությունը

Հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր 5 երեխայից մեկը դպրոց չի հաճախում: Առավել խոցելի են այդ առումով աղքիկները:



2015 Նոյեմբեր

Հայաստանի կառավարություն WomenNet.am



Հասարակություն բոլորի համար

Այսօր, երբ Հայաստանում ներառական կրթությունը օրենսդրորեն ամրագրված պետական քաղաքականություն է, ակնհայտ է, որ դրա իրականացման համար անհրաժեշտ պայմաններից մեկը ներառական հասարակության ձևավորումն է: Այնպիսի հասարակության, որը հարգում ու գնահատում է իր բոլոր անդամներին, պայքարում է խտրականության ցանկացած դրսևորման և նախապաշարձումների դեմ: Դա հասարակություն է, որը խոչընդոտներ չի հարուցում մարդկանց առջև իրենց տարբերությունների պատճառով: Դա հասարակություն է բոլորի համար...

Ներառական կրթության քաղաքականության իրականացման առաջին իսկ փորձերից ի հայտ եկավ ամենավազն երկու խոչընդոտ: Խոսքը շրջապատի մատչելիության ապահովման և հասարակության վերաբերմունքի փոփոխության մասին է: Երկուսն էլ, ըստ էության, պատմեցների հաղթահարման հետ կապված խնդիր են: Սակայն եթե առաջինը ընդամենը կառուցապատման նորմերի ներդրման հարց է, ապա երկրորդը՝ սոցիալական բնույթի պատմեցները վերացնելու խնդիր է: Պատմեցներ, որոնք արմատավորված են մեր գիտակցության մեջ, և որոնց միջոցով հասարակության մի մասը անտեսում կամ մեկուսացնում է մյուսին: Այս իմաստով ներառական կրթությունը համընդհանուր սոցիալական ներառականության շղթայի մի օղակն է միայն, թեկուզև ամենակարևորը: Այս խնդրով զբաղվող փորձագետների դիտարկմամբ՝ վերջին շրջանում հանրության ընկալումներում որոշակի առաջընթաց է նկատվում: Մարդիկ սկսում են ավելի հանգիստ վերաբերվել ներառականության գաղափարին և ավելի ուշադիր լինել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ: ...«ես երկու դպրոցական երեխա

...Մելանյա Սեդրակյանը՝ 5-ամյա Հասմիկի մայրը, ասում է, որ իր աղջկան վերապահումով են վերաբերվում: «Ինձ ճիշտ հասկացեք, ասում է մեր գրուցակից Մելանյան, երբ նրա հետ դուրս եմ գալիս զբոսնելու, հարևանները խեղ հայացքներ են գցում մեզ վրա: Իհարկե, ոչ բոլորը, բարի մարդիկ էլ կան, սակայն նրանք քիչ են: Ես նկատում եմ, որ ուրիշ երեխաների մայրերը խուսափում են մեզանից, և նրանց երեխաները չեն իսկույն իմ աղջկա հետ: Նույնիսկ մանկապարտեզ չեն տանում նրան: Վախենում եմ, որ հանկարծ դաստիարակներն ուշադիր չլինեն ու երեխայիս նեղացնեն: Աղջիկս գուցե չի խոսում, բայց ամեն ինչ գգում է: Ամուսնուս հետ ուզում ենք Եվրոպա տեղափոխվել:

Ասում են՝ այնտեղ ավելի հանդուրժող են...»: Մեր մյուս գրուցակից Ելենա Բարսեղյանը, ով ուշադրությամբ լսում էր Մելանյայի պատմությունը, ասաց, որ հասկանում է նրան, սակայն կարծում է, որ երեխային մարդկանցից թաքցնելը ճիշտ չէ: Իր որդի Գոշային նա դեռևս 3 տարի առաջ էր ամեն ինչ բացատրել, երբ նրանց դասարան էր եկել խոսքի խանգարում ունեցող մի աղջիկ: Հետագայում նա այլևս ոչինչ չէր հարցնում, սակայն մի օր դպրոցից տուն գալուց հետո ասաց. «Մայրիկ, մարդիկ այնքան տարբեր են, և կարևոր չէ, որ նրանք ինձ կամ քեզ նման չեն: Ես նրանք բոլորին ուզում եմ օգնել»: «Ինձ համար դա մեծ հաղթանակ է, դա նշանակում է, որ նա լավ մարդ է դառնալու», համոզված է Ելենան:

ՕՅՄՄՅՈՒՅՈՒ

- ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2013-ին անցկացրած «Հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ վերաբերմունքը Հայաստանում» հարցման տվյալներով՝ հարցվածների 95 տոկոսը կարծում է, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է ներգրավված լինի հասարակության մեջ: Սակայն այս ցուցանիշը զգալիորեն նվազում է մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում՝ հարցվածների մոտ մեկ երրորդը կարծում է, որ այդպիսի երեխաները պետք է հասարակությունից առանձնացվեն:
- Դպրոց հաճախելու հարցում հարցվածների կեսը կողմ է, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան հաճախի հանրակրթական դպրոց, սակայն մտավոր հաշմանդամության դեպքում պատասխանողների գերակշիռ մասը՝ 87 տոկոսը կարծում է, որ երեխան պետք է գնա հատուկ դպրոց:
- Հարցվածների գերակշիռ մասը՝ 87 տոկոսը, ընդունելի է համարում, որ իր երեխան ունենա ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր, սակայն միայն 58 տոկոսի համար է ընդունելի, որ իր երեխան մտավոր հաշմանդամություն ունեցող մոտ ընկեր ունենա:

«Նի Ա»-ն աճՅ

Հանճար, ուն փակի տակ են պահել



Ջուդիթ Աբրեղ ծնվել է Դաունի համախտանիշով և կյանքի մեծ մասն անցկացրել մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար փակ հաստատությունում: Ազատ արձակվելով այնտեղից՝ նա հանկարծ դարձավ համաշխարհային հայտնի նկարչուհի: Այսօր նրա աշխատանքները զննահատվում են 20 հազար դոլար և ավելի: Ջուդիթի պատմության և արվեստի մեջ շատ առեղծվածներ կան մարդկային հոգեբանության մասնագետների և արվեստագետների համար: Իսկ շատերի համար էլ՝ մեծ հույս:

«Մենք ենք» ներառական թատրոնը փակման վտանգի տակ է



«Մենք ենք» ներառական թատրոնի դերասանները 6-22 տարեկան են, նրանց թվում կան նաև լսողության, տեղաշարժման և այլ հաշմանդամություն ունեցող երեխաներ: «Ներառական թատրոնն արվեստ է ստեղծում, ու եսկան չէ, որ բեմում հանդես եկող երեխան սայլակով է, թե՛ ոչ», - ասում է թատրոնի ղեկավար և բեմադրիչ Մարինե Ասատրյանը՝ հավելելով, որ ներառական թատրոնը կոտրում է հասարակության մեջ առկա կարծրատիպերը: «Մենք ենք» ներառական թատրոնը հիմնվել է 2004-ին Երևանի մանկական զարգացման կենտրոնի կողմից (այժմ՝ Մանկական զարգացման հիմնադրամ): Գործում էր դրամաշնորհային ծրագրերի հիման վրա: Այսօր թատրոնը մշտական ֆինանսավորում չունի և փակման վտանգի տակ է: Թատրոնին աջակցելու համար այցելե՛ք <http://donate.am/en/special-attention-to-special-needs/project> կայքը:

Դոկտոր ժպիտը մայրական սիրով է բուժում



Բժշկական գիտությունների թեկնածու Պատչ Ադամսը մարդկանց դեղերով չի բուժում, նա պնդում է, որ լավագույն դեղամիջոցը ծիծաղն ու մայրական սերն է: Տարիներ առաջ բժշկի խալաթի փոխարեն նա հազավ ծաղրածուի հագուստն ու, ծիծաղով զինված, մտավ աշխարհի տարբեր հիվանդանոցներ: Ծաղրածու լինելը, նրա խոսքով, սուկ հնարք է մարդկանց մոտենալու, նրանց սիրտն ու հոգին բացելու համար: Վերջերս «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի հրավերով նա իր հիվանդանոցային ծաղրածուների խմբի հետ միասին Հայաստան էր եկել: Նրանք եղան Երևանում, Գյումրիում, Վանաձորում և Դիլիջանում՝ այցելելով մանկատներ ու մանկական հիվանդանոցներ:

«Մեր մանկատանը Պատչ Ադամսն այցելեց մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխաներին: Մեր աշխատողները ուշադրությամբ հետևում էին, թե ինչպես է աշխատում: Այն երեխաները, որոնց օրվա մեջ նույնիսկ մի վայրկյան ժպտալիս կարող է չտեսնեիր, շատ խաղաղված էին: Երեխաներն այդ սիրո և ծիծաղի կարիքը շատ ունեն»:
«...Ապշեցուցիչ էր նաև այն, որ նրանք մի քանի ժամ շփվեցին երեխաների հետ, բայց ընդհանրապես չզգացվեց, որ տարբեր լեզուներով են խոսում ու չեն հասկանում միմյանց խոսքը: Այդ ընթացքում նրանք սիրո և ծիծաղի լեզվով էին խոսում իրար հետ: Անեն մի երեխայի խնդրին առանձնահատուկ է, և մենք այս այցից նրանց հետ աշխատելու մեր ձևեր սովորեցինք»:
Ինքը՝ Ադամսը ասում է, որ մարդկանց պատմության մեջ սիրո մեծ մասը եկել է կամայինքից. «Ամկախ այն փաստից, թե որքան սարսափելի է եղել տղամարդկանց վերաբերմունքը իրենց կանանց հանդեպ, այդ կամային ամուր սիրել են իրենց երեխաներին»:

«i Շ i Յ ի Շ u»

«Ինձ ասել են, որ հայ հասարակությունը առանձնակի վերաբերմունք ունի երեխաների հանդեպ»



Այս տարվա մայիսին Հայաստանում էր ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Սոդ դե Բյոր-Բուքիցին, ով նպատակ ուներ գնահատելու երկրում երեխաների վաճառքի, մարմնավաճառության և պոռնոգրաֆիայի իրավիճակը: Իր այցի շրջանակներում նա այցելել է նաև Շիրակի և Լոռու մարզերի խնամքի հաստատություններ ու մանկատներ, զրուցել երեխաների հետ:

«Ի մ այցելության ընթացքում գրեթե բոլոր զրուցակիցներս անընդհատ ասում էին, որ հայ հասարակությունն իր ավանդույթների ու ընտանեկան արժեքների բերումով առանձնակի վերաբերմունք ունի երեխաների հանդեպ: Ինձ նաև ասվեց, որ հայերի մոտ պատմական տառապանքի բերումով երեխաների հանդեպ կոլեկտիվ պատասխանատվություն է ձևավորվել, և անհեռանք մնան», - ասաց տիկին Բուքիցին՝ մտահոգություն հայտնելով նախ անչափահասների ամուսնության, ինչպես նաև սոցիալապես անապահով ծնողների կողմից խնամքի հաստատություններ, մանկատներ երեխաներին ուղղորդելու խնդրով: «Գիշերօթիկներում երեխաների շուրջ 90 տոկոսը այստեղ են հայտնվել սոցիալական

«Երեխաները ձնեված են, սոված, բռնության են ենթարկվում...»

Գիշերօթիկներում և հատուկ դպրոցներում ժամկետանց ու արգելված սնունդ, հիգիենայի բացակայություն, երեխաների նկատմամբ բռնության ու նվաստացման դեպքեր՝ այս մասին են վկայում ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանի կողմից մարտին հրապարակված «Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում. համակարգային վերլուծություն» արտահերթ զեկուցում ներկայացված փաստերը, որոնք արձանագրվել են Երևանում և մարզերում կատարված 37 այցի արդյունքում:

Հաստատություններից մեկում երեխաները նշել են, որ դայակներն իրենց վատ են վերաբերվում, հայհոյում են, դիմում «այ դուռակներ» բառերով, փայտով ու մանրահատակի կտորներով ծեծում ու հարվածում են իրենց գլխին: Երեխաները ամաչում էին արտաբերել հայհոյանքների բովանդակությունը, ասկայն նշում էին դրանց սկզբնատառերը: Աղջիկներից մեկը փորձագետի ականջին ասել է դայակի՝ ամենահամախոս օգտագործած հայհոյանքը:

Գիշերօթիկներից մեկի երեխաները պատմել են, որ իրենց սպիտակեղենը չի լվացվում, այն ուղղակի փոխանակվում է տղաների և աղջիկների սպիտակեղենի հետ, որի պատճառով անկողնուց մեզի հոտ է գալիս: Գիշերային դայակները աղջիկներին ստիպում են մերկ վիճակում կանգնել միջանցքում ամբողջ գիշեր և մրսել, «չարածնի» երեխաներին մեկուսացնում և ստիպում են կանգնել մեկ ոտքի վրա, արգելում են երեկոյան 22:00-ից հետո գնալ զուգարան կամ առաջարկում օգտվել դրսում գտնվող զուգարանից, որը բավականին հեռու է, երեկոյան ժամերին (17:00-ից հետո) առհասարակ արգելում են ջուր խմել, երեխաներին դիմում են վիրավորական բառերով (հիմնականում կենդանիներով):

2015 թ. հունվարի 1-ի դրությամբ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում խնամվում է սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 750 երեխա: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալներով՝ 6 պետական մանկատներում խնամվող 730 երեխաների 70%-ը հաշմանդամություն ունեցող երեխաներ են, որոնցից ծնողները հրաժարվել են: Մնացած երեխաներից 95 տոկոսը ունեն ծնողներ:

րի անուններով): Երեխաները փորձագետներին ցուցադրել են, թե ինչպես են իրենց հարավում, մազերից քաշում, բռունցքով ապտակում:

- Անմխիթար է վիճակը նաև հատուկ դպրոցներում երեխաներին տրամադրվող սննդի որակի առումով: Այդպես, հատուկ դպրոցներից մեկում փորձագետներն արձանագրել են որդնած ցորեն, ժամկետանց թեյ, բորբոսնած հաց, լավաշ, լոլիկի պահածո, օգտագործման համար ոչ պիտանի տեսք ունեցող տավարի միս: Չեն ներկայացվել մսի լաբորատոր հետազոտության անդորրագիրն ու 10-օրյա կտրվածքով ճաշացանկերը: Պահեստապետի պնդմամբ՝ երեխաները չեն ստացել որևէ տեսակի կաթնամթերք, միայն այցելության օրը 2014-2015 թթ. ուստարվա ընթացքում առաջին անգամ ստացել էին մածուխ:

- Հաստատություններից մեկում այցի ընթացքում երեխաների հետ անցկացվել են թեստ-խաղեր, որոնց ընթացքում երեխաները մատնանշել են, որ իրենք ամենաշատը վախենում են դպրոցում գիշերելուց, իրենց վրա բարկանալուց, իսկ ամենաշատ ուզում են ամառային արձակուրդն ընտանիքի հետ անցկացնել:

«Երեխան ղեճ է ընսանիքում ապրի»

«Երեխաների մուտքը հատուկ հաստատություններ պետք է կանխարգելվի, իսկ մանկատներում ապրող երեխաներին պետք է վերամիավորել ընտանիքների հետ՝ աջակցելով վերջիններիս և իրականացնելով մասնագիտական դեպքի վարում յուրաքանչյուր դեպքի համար», - ասում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի երեխաների պաշտպանության բաժնի ղեկավար Աննա Հարությունյանը: Նրա խոսքով, ՅՈՒՆԵՍԿՆ-ը՝ որդեգրելով «Երեխան պետք է ապրի ընտանիքում» կարգախոսը, այս պահին աջակցում է ՀՀ կառավարությանը խոր գնահատում իրականացնել մի քանի հաստատություններում՝ տեսնելու, թե այդ երեխաներն ինչ պատճառով են հայտնվել այնտեղ և ինչ կարելի է անել ընտանիքներին օգնելու համար, որպեսզի երեխաները վերադառնան ընտանիք: Փորձագետը նշում է նաև, որ ծնողագրական երեխաների համար որդեգրումից բացի Հայաստանում գործում են տարբեր ուղիներ, առաջինը՝ հարազատ-բարեկամների կողմից խնամակալությունը, իսկ եթե այլ տարբերակ չկա, ապա խնամատար ընտանիքը:



«i Յ i Շ u»

«Չես դասկերացնի, թե ինչ անանակում էր դորոցի դիտակը կրել»

Մարիամն ու Ադրինեն (անունները փոխված են) Երևանի հատուկ դպրոցներից մեկի շրջանավարտներից են: Դպրոցը հատուկ է կոչվում, քանի որ այստեղ սովորում են միայն մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաներ: «Ինչքան էլ պատմեմ, մեկ անգամ անգամ անգամ, թե ինչ անանակում էր դորոցի դիտակը կրել», - ասում է Մարիամը:

«Իշում եմ՝ մի անգամ մեր դպրոցի աշխատողներից մեկի հետ ավտոբուս էինք մտնել, ես արդեն 15 տարեկան էի, շատ բաներ հասկանում էի: Ավտոբուսում մի տղա ինձ էր նայում, մի քիչ երկար նայեց, մեր դպրոցի աշխատողը կոպտեց էր տղային, ասեց՝ ի՞նչ ես նայում, ինքը «դողանոցի էրեխա» ա, իզուր մի նայի», - պատմում է Մարիամը:

Ադրինեն և իրեն ճնշված է զգացել հատուկ դպրոցում և երկու անգամ փորձել է այնտեղից փախչել: «Մեր էրեխաները տարբեր աստիճանի մտավոր հաշմանդամություն ունենին, ու իմ կարծիքով ճիշտ չէր բոլորիս մի տեղ հավաքելը, ինձ դուր չէր գալիս այդ դպրոցը: Ես շատ կուզեի սովորական դպրոց գնալի, նետեղի երեխաներ էլ են իրարից տարբեր, մեկը խելացի ա, մեկը՝ էղբան էլ չէ, բայց իրենց ոչ ուսուցիչները, ոչ էլ մյուս մարդիկ այդպես չեն անվանում, ինչպես մեզ»:

Ադրինենի կարծիքով՝ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաներն ավելի լավ կկրթվեն սովորական՝ հանրակրթական դպրոցներում: «Մարդը ե՞րբ ա լավ սովորում, երբ աչքի առաջ օրինակ ունի, երբ տեսնում ա, որ իրա դասարանի էրեխաներ էլ են սովորում: Մենք լիքը աշակերտներ ունեինք, որ կարային սովորեին, ուղղակի ուսուցիչներին թվում էր, թե բոլորը նույնն են, ու նորմալ չէին սովորացնում»:

Մարիամն էլ նշում է, որ հասարակությունը բացասական վերաբերմունք է դրսևորում հատուկ դպրոցի աշակերտների նկատմամբ. «Մարդիկ որ իմանում են հատուկ դպրոց, մեկը խելացի ա, մեկը՝ էղբան էլ չէ, բայց իրենց ոչ ուսուցիչները, ոչ էլ մյուս մարդիկ այդպես չեն անվանում, ինչպես մեզ»:

Հայաստանում այսօր գործում են 23 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ, որտեղ 2013-2014 ուստարում սովորել է շուրջ 2300 երեխա: Այդ դպրոցներից 15-ը նախատեսված են մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

ԵՆ ԹՅՈՒՆ ԻՅ ԿՈՒՆԵՍՏ

«Հասանադամություն ունեցող աղջիկներն ու կանայք կրկնակի խոցելի են»

Չնայած արևածաղկի սերմերը տարբեր են՝ մեծ ու փոքր, երկար ու կարճ, բայց բոլորը անփոփոխ են մի ծաղկի մեջ: Մենք ուզում ենք, որ մեր հասարակությունն էլ այդ ծաղկի պես լինի... այսպես է բնորոշում ներառական հասարակությունը Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինքի նախագահ Զառա Բաթոյանը:



Եթե մենք ասում ենք, որ գենդերային խտրականության պատճառով կանայք խոցելի են, ապա պետք է ճշտենք, որ հաշմանդամություն ունեցող կանայք կրկնակի խոցելի են: Մենք նույնպես բախվում են կարծրատիպերի, որոնք անհարթահարելի պատճառներ են հարուցում մեր առջև:

Զառան նշում է, որ դրա մասին են վկայում են նաև վիճաբանական տվյալները, ասենք՝ հաշմանդամություն ունեցող աղջիկներին համեմատաբար ավելի հաճախ են մանկատուն հանձնում, քան տղաներին, նրանց ավելի քիչ են այցելում: Հասարակությունից մեկուսացվելու նրանց ռիսկը ավելի մեծ է: Խտրական վերաբերմունքի մասին են վկայում նաև իրենց կատարած փոքրիկ դիտարկումները:

Տղա երեխաների ծնողները շատ ավելի ակտիվ են, ավելի ընդգրկված են տարբեր միջոցառումներում, հետամուտ են լինում իրենց տղայի կրթությանը, քան աղջիկների դեպքում: Ավելի համարձակ և ազատ են դաստիարակում իրենց երեխաներին: Ամեն բան անում են, որ երեխայի ինքնագնահատականը ավելի բարձր լինի, նշում է Զառա Բաթոյանը՝ հիշելով նաև իր մանկությունից դրվագներ: Երբ գալիս էին «Հուլիսի կամուրջ», իմ տղա ընկերների մայրիկներն ավելի ազատ էին, օրինակ՝ ուրախ էին, որ իրենց երեխաները գնում են ժամադրության, չարություն են անում: Ասում էին՝ ոչինչ, թող անի, չէ՞ որ հետագայում պետք է ինքնուրույն ապրի, իսկ աղջիկների դեպքում այդպես չէր: Չեն կարող ասել, որ կային ֆիզիկական կամ հոգեբանական ճնշումներ, սակայն հասարակության վերաբերմունքը, կարծրատիպային պատկերացումները տանում էին խտրականության:

Նրա կարծիքով՝ այս ամենը գալիս է հենց ընտանիքից:

Բանի որ կնոջ իդեալական կերպարը ընտանիք կազմելն է, մայր, կին լինելը, տնային տնտեսությունը վարելը, իսկ մեր պատկերացմամբ՝ հաշմանդամությունը պետք է որ խանգարի այդ շղթային, ստացվում է, որ կնոջ օգտակար գործողության գործակիցը նվազում է: Այսինքն՝ ընդունված է մտածել, որ եթե կինը հաշմանդամություն ունի, ապա չի կարող երեխա ունենալ, հետո նաև խնամել այդ երեխային, չի կարող տնային հոգսերը հոգալ և այլն: Եվ երբ ընտանիքում ծնվում է հաշմանդամություն ունեցող աղջիկ, ընտանիքը դժվարանում է այդ կարծրատիպից դուրս գալ: Այսինքն՝ այս դեպքում ընտանիքն իրեն ավելի խոցելի է համարում, քան տղայի դեպքում կլինի, նշում է Զառան և հավելում, որ այս կարծրատիպերը հետագայում լուրջ խնդիրների առջև են կանգնեցնում աղջիկներին՝ սկսած ընտանիք կազմելուց մինչև աշխատանք գտնել, մայրություն:

Ավելի հաճախ ընտանիք են կազմում հաշմանդամություն ունեցող տղամարդիկ, ընդ որում, շատ դեպքերում ամուսնանում են հաշմանդամություն ունեցող կանանց հետ: Իսկ հաշմանդամություն ունեցող կանանց շատ քիչ են ընտանիք կազմում, և այդ դեպքերը այնքան հազվադեպ են, որ միանգամից բոլորի ուշադրության կենտրոնում են հայտնվում, նույնիսկ հեռուստատեսությանն են ցույց տալիս:

Շատ տարբեր ու խոր շերտեր ունի այս խնդիրը, մտածողության, կարծրատիպերի: Հատկապես մարզերում, քանի որ երևանում իրավիճակը մի փոքր այլ է: Զառա Բաթոյանը նշում է, որ, ցավոք, հաշմանդամություն ունեցող երեխաների շրջանում գենդերային անհավասարության խնդիր մասին շատ քիչ է բարձրաձայնվում: Նրա կարծիքով՝ այստեղ մեծ դերակատարում կարող են ունենալ կանանց կազմակերպությունները:

ԹՅՈՒՆ ԻՅ ԿՈՒՆԵՍՏ

Հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր 5 երեխայից մեկը դպրոց չի հաճախում

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի գնահատականներով՝ «Հաշմանդամություն ունեցող երեխաների 18%-ը, այդ թվում՝ տղաների 17%-ը և աղջիկների 21%-ը, դպրոց չի հաճախում: Հենաշարժական և/կամ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների խմբում այս ցուցանիշը կազմում է 26-27%: Գյուղական բնակավայրերում այս ցուցանիշներն ավելի բարձր են»:

Ծնողները երեխաների դպրոց չհաճախելու հիմնական պատճառ են նշում այն, որ երեխան չի կարող դպրոցում սովորել: Մարզերում, օրինակ՝ այդպես են կարծում դպրոց չհաճախող երեխաների ծնողների 51%-ը, երևանում՝ 36%-ը: Լրացուցիչ խոչընդոտ են նաև կարծրատիպային բնույթի պատճառները: Առավել խոցելի են այդ առումով հաշմանդամություն ունեցող աղջիկները:



«Հուլիսի կամուրջ» ԳԿ

«Եթե տղա լիներ, ուրիշ կերպ կվարվեի, աղջիկ երեխա էր, թաքցրեցի՝ մտածելով, թե ճիշտը դա է»

...Ունեն երկու երեխա՝ տղա և աղջիկ: Աղջիկն հաշմանդամ է, 12 տարեկան է, ապրում ենք սահմանամերձ համայնքում, չենք աշխատում: Ստանում ենք երեխաների նպաստ: Լուսինեն ծնվել է արդեն հաշմանդամ բժիշկների մեղքով, ծննդաբերության ժամանակ սխալ միջամտության պատճառով երեխան հաշմանդամ դարձավ: Երբ փոքր էր, չէի ցանկանում, որ նրան տեսնեն: Երբ տունը հյուր էր գալիս, երեխային մյուս սենյակ էի տանում, վատ էի զգում, որ աղջիկ երեխա նման վիճակում է: Երբ դպրոցական տարիքի դարձավ, մտածում էի՝ ի՞նչ անել: Խորհրդակցեցի դպրոցի տնօրենի հետ, նա խորհուրդ տվեց երեխային դպրոց տանել, բայց դպրոցը չունի պայմաններ՝ թեքահարթակ չկա, դրա համար խնդրեցի դպրոցի տնօրենին ուսուցումը տնային եղանակով իրականացվի, այդպես էլ եղավ: Դպրոցի ուսուցիչներն ամեն օր մի քանի ժամ Լուսինեի հետ զբաղվում են մաթեմատիկայով և հայոց լեզվով: Շատ խելացի երեխա է:

Լուսինեն սիրում է զբաղվել համակարգչով, նրան հուզող ցանկացած հարց փնտրում ենք ինտերնետում, երեխայի ձեռքերը չեն աշխատում: Մի անգամ հարցրեցի՝ Լուսինե, կուզե՞ս դպրոց գնալ, պատասխանեց՝ չէ՛, ամաչում են: Եթե տղա լիներ, ուրիշ կերպ կվարվեի, աղջիկ երեխա էր, թաքցրեցի՝ մտածելով, թե ճիշտը դա է...

Համարի վրա աշխատել են՝ Լիա Խոջոյանը, Արման Դարիբյանը, Մարիաննա Դահրամանյանը, Լիլիթ Քոչինյանը, Աննա Սարգսյանը

unicef logo and text: Մուլն բողարկումը լույս է տեսել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը: Գլխավոր խմբագիր՝ Թամարա Դավթաբեկյան էլ. huu@womensnetam@gmail.com

ԹՅՈՒՆ ԻՅ ԿՈՒՆԵՍՏ

«Էությամբ լավատես եմ, ունեմ նաև հումորի մեծ զգացում, որն ինձ օգնում է չհուսալվելու»

«Ազաթ» հասարակական կազմակերպության նախագահ Կարինե Գրիգորյանի հետ ծանոթացանք մի քանի տարի առաջ «Կանանց իրավունքների զարգացման ասոցիացիայի» գլոբալ համաժողովի ժամանակ: Նա չափազանց ոգևորված էր այն փաստով, որ համաժողովին ներկա էին մեծ թվով հաշմանդամություն ունեցող կանայք, ինչը նման մասշտաբով անցկացվող հավաքներում հազվադեպ է: Կարինեի հետ գրույցը «բոլորի համար հասարակության» խնդիրների մասին է, թեպետ իր անձնական պատմությունը այդ զաղափարի իրականացման օրինակ է:

Անագիտությանը տնտեսագետ եմ, կրթություն ստանալու իմ ամենակարևոր խթանը և հաջողության գրավականը եղել է ընտանիքս: Դա իմ մեծ բախտավորությունն է: Անշուշտ, եղել են պահեր, երբ հուսահատվել եմ: Ծնված օրվանից ես ևս բախվել եմ բազում արգելքների, խոչընդոտների և անարդարությունների: Ամեն ինչ ինձ համար շատ ավելի դժվար կլիներ, եթե իմ կողքին չլիներին հարազատներս, ընկերներս, ու՛րբեր, հավատարմվ իմ ուժերին, միշտ աջակցել ու խրախուսել են ինձ: Ծնորհակալ եմ բոլորին: Դրա համար էլ էությամբ լավատես եմ, ունեմ նաև հումորի մեծ զգացում, որն ինձ օգնում է չհուսալվելու, - ասում է նա:

Իր առողջական խնդիրների մասին Կարինեն երբեք չի խոսում, շրջապատի մարդկանց էլ այնպես է տրամադրում իր հետ շփվել, որ նրանք մոռանում են այդ մասին հարցեր տալ:

Թեև իհամալի տիրապետում է մասնագիտությանը, բայց, չգիտես ինչու, չի կարողանում աշխատանք գտնել: Գուցե հենց իմ հաշմանդամության պատճառով: Եվ քանի որ էությամբ ակտիվ և նախաձեռնող էի, որոշեցի անցնել կամավորական աշխատանքի, ինչն էլ ապագա հասարակական գործունեության համար խթան հանդիսացավ: Ութ տարուց ավելի կամավոր եմ եղել, դասավանդել եմ անգլերեն, թարգմանել եմ ծրագրեր: Թեև Գյումրում գործում էին հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներով զբաղվող մի շարք կազմակերպություններ, սակայն կանանց խնդիրներով նրանք չէին զբաղվում: Այսպես ստեղծվեց հատուկ կարիքներով կանանց կենտրոնը, որը որոշեցիմք անվանել «Ազաթ», քանի որ կազմակերպության շահառու աղջիկներին ու կանանց նմանեցնում ենք ազաթ քարին: Նրանք կազմակերպությանը հարողորմ են ամուր կամքի ուժ, համառություն, նաև յուրահատուկ գեղեցկություն ունեն, ինչպես ազաթը: Այնպես որ, մեր կենտրոնն էլ ազաթի նման չափազանց հետաքրքիր բյուրեղ է: Իմ երազանքն է բարելավել հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների



Նշենք, որ «Ազաթ» առաջիններից մեկն էր, որ բարձրաձայնեց՝ հաշմանդամություն ունեցող կանայք լիարժեք կյանքով ապրելու, մայրանալու իրավունք ունեն:

Մեր կազմակերպությունը դեռ 2013 թվականից սկսեց իրականացնել ծրագրեր, որոնք նպատակն էր նպաստել հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների վերադարձողական առողջության հետ կապված իրավունքների իրացմանը: Անկեղծ ասած՝ արձագանքները տարաբնույթ են եղել: Մեզ նույնիսկ քննադատել են, թե իբր մենք Հայաստանում անբարոյականություն ենք քարոզում: Սակայն մենք չենք հուսալքվել, հավատացել ենք գաղափարին, քանի որ մեր շահառուների և գործընկերների հետ անկեղծ գրույցները վկայում էին, թե ինչքան կարևոր և տեղին է մեր նախաձեռնությունը: Ի դեպ, կենտրոնի շահառուներից երջանիկ ամուսնություններ ենք ունեցել: Նրանք թվում են լսողության խնդիրներ ունեցող Արշալույսն ու Մեսրոպը: Նրանք այսօր ունեն երկու երեխա, ու՛րբեր չունեն լսողության խնդիր և հաղորդակցվում են թե՛ ժեստերի լեզվով, թե՛ բառերով: Ի դեպ, վերջերս Գյումրու քաղաքապետարանը «Ազաթ» ԳԿ խնդրանքով հողամաս էր տրամադրել՝ ներառական խաղահրապարակ կառուցելու համար: Աշխատանքներն արդեն մոտենում են ավարտին...